ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2014թ. N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2796-րդ տարեդարձի առթիվ, հայկական երաժշտության բնագավառում ունեցած բազմամյա վաստակի և ներդրած նշանակալի ավանդի համար հայ ականավոր ջութակահար, Կոմիտասի անվան լարային քառյակի առաջին ջութակահար և գեղարվեստական ղեկավար, պրոֆեսոր Էդուարդ Զոհրաբի Թադևոսյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էդուարդ Զոհրաբի Թադևոսյանը ծնվել է 1947 թվականի մայիսի 2-ին Երևանում:

1965 թվականին ավարտել է Երևանի Չայկովսկու անվան երաժշտական հատուկ դպրոցը:

1967 թվականին Էդ. Թադևոսյանը դարձել է Վենյավսկու անվան ջութակահարների միջազգային մրցույթների դափնեկիր:

1969 թվականին՝ Ժան Տիբոյի անվան ջութակահարների միջազգային մրցույթների դափնեկիր:

1970 թվականին ավարտել է Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի ջութակի բաժինը՝ Լեոնիդ Կոգանի դասարանը: Այնուհետև, հրավիրվել է Կոմիտասի անվան լարային քառյակ, որպես՝ 2-րդ ջութակահար: Նույն թվականին նա դարձել է Կովկասյան ջութակահարների մրցույթի դափնեկիր:

1976 թվականից առ այսօր Էդուարդ Թադևոսյանը հանդիսանում է քառյակի գեղարվեստական ղեկավարը և առաջին ջութակահարը:

Հայ ականավոր ջութակահար, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Էդ. Թադևոսյանը 1996 թվականին նշանակվել է նվագախմբային ֆակուլտետի դեկան:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանակիր, բազմաթիվ մրցույթների ու փառատոների դափնեկիր և հաղթող Էդուարդ Զոհրաբի Թադևոսյանի մեծ վաստակը, ներդրած նշանակալի ավանդը, գիտական ու մանկավարժական գործունեությունը՝ առաջարկվում է Էդուարդ Թադևոսյանին շնորհել «Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էդուարդ Զոհրաբի Թադևոսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էդուարդ Զոհրաբի Թադևոսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ